ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Հեռ. 093.27.93.57
ՀԱ ----
«15» ---VIII--- 2018թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետին

Ձեզ ենք ներկայացնում Սաղմոսավան համայնքի ավագանու 2018թ-ի օգոստոսի 15-ի թիվ 1,2,3,4 որոշումները, կից հավելվածների:

Սաղմոսավան համայնքի ղեկավար Գ.Ս.ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ... փաստաթղթաշրջանառության ...
16 10 2018
Մուտք N 01/8235

Հավելված
Համայնքի ավագանու 2018թ.
օգոստոսի 15-ի թիվ ----- որոշման

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

# ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

/փոփոխված/

Հաստատված է Սաղմոսավան համայնքի
ավագանու 2018 թվականի օգոստոսի 15-ի N1234 որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Ն. Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոս 2018թ. N-1

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով Սաղմոսավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Սաղմոսավան համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 120.000(մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

**Կողմ-4** **Դեմ-0** **Ձեռնպահ-0**

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ.Թադևոսյան
Ս.Սլոյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ն. Ավագյան

ՀՀ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոս 2018թ. N-20

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 –րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-րդ կետով Սաղմոսավան համայնքի ավագանին՝

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Սաղմոսավանի համայնքապետարանի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու հունվարի 10-ի որոշումը:

**Կողմ-3** **Դեմ-1** **Ձեռնպահ-0**

Լ.Միքայելյան Ս. Սլոյան

Տ. Ավագյան
Մ. Թադևոսյան

**Սաղմոսավան համայնքի ղեկավար Գ.Ն.Ավագյան**

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
համայնքի ավագանու

15 օգոստոսի 2018թ. N1 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 5.5

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 120.000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար1.2.1 | 1 | 81.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 80.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 80.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 80.000 |
| Անասնաբույժ (ինքնաֆինասավորում) | 0.5 | 33.100 |
| | | |
| Ընդամենը ամսեկան | 5.5 | 474.100 |

Սաղմոսավան համայնքի ղեկավար՝ Գ.Ն.Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N-3

15 օգոստոս 2018թ.

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Սաղմոսավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2018թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ.Ավագյան
Մ.Թադևոսյան
Ս. Սլոյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Ն. Ավագյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
գյուղական համայնքի ավագանու
15 օգոստոս 2018թ. N--7----որոշման

# ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019---թ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30.000 դրամ.

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

3. **Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 3500 դրամ.

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ------- դրամ:

Սաղմոսավան համայնքի ղեկավար Գ. Ն.Ավագյան

Հավելված 1
Սաղմոսավան համայնքի ավագանու
2018թ. օգոստոսի 15 թիվ --4--- որոշման

| Հ/հ | Տեղական տուրքերի տեսակները | Սահմանված դրույքաչափերը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Սաղմոսավան համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը | |
| 1) | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության(տեղադրման)(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | |
| ա. | մինչև 300 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության, շենքերի և շինությունների համար՝ | 7500 |
| բ. | սույն կետի 1)ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | |
| | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30.000 |
| | 501-ից մինչև 1000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50.000 |
| | 1001-ից մինչև 3000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50.000 |
| գ. | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5000 |
| | | |
| | | |
| | | |
| | | |